ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌ 2024

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից 2024թ. հոկտեմբերի 17-ին:

Որակի ապահովման բաժնի պատասխանատուներ՝

Հայրապետյան Ք.

Նախրատյան Մ.

Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարցման ընդհանուր նկարագիրը 3
2. Հարցման մեթոդաբանությունը 3
3. ԳՊՀ առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանում.....4
4. Եզրակացություններ և առաջարկություններ 10

I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժնը ԳՊՀ ուսանող-բուհ կապն ամրապնդելու, առաջին կուրսեցիների կարիքները բացահայտելու, սոցիալական և ֆինանսական աջակցություն տրամադրելու, ուսանողական առօրյան բովանդակալից և արդյունավետ կազմակերպելու նպատակով առաջին կուրսեցիների շրջանում իրականացրել է հարցում: Հարցման նպատակն է ամրապնդել ուսանող-բուհ կապը, վերհանել ուսանողների խնդիրները և նրանց մասնակիցը դարձնել բուհի առօրյային:

II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են Համալսարանի որակի ապահովման բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցումն իրականացվել է թղթային տարբերակով: Հարցման նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, որը միտված է բուհում ուսանողների խնդիրների բացահայտմանը և ներքին շահակիցների բավարարվածության աճին:

ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

ԳՊՀ առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ հարցմանը մասնակցել են 2024-2025 ուսումնական տարվա առկա ուսուցման 1-ին կուրսի թվով 39 ուսանողներ, որը կազմում է առաջին կուրսի ուսանողների 84,7%-ը:

1. «Ինչպե՞ս որոշեցիք ընդունվել ԳՊՀ և ընտրել տվյալ մասնագիտությունը»:



Հարցվողների 84,6 %-ը /33 ուսանող/ տվել է «իմ որոշմամբ» պատասխանը, իսկ 15,4 %-ը /6 ուսանող/՝ «ծնողներիս խորհրդով» պատասխանը: Արդյունքները փաստում են, որ առաջին կուրսի ուսանողները բուհը և մասնագիտությունը ընտրելիս հաստատակամ են և կարևորում են իրենց նախասիրությունները:

2. «Ընտանիքի կազմը, նրանց զբաղվածությունը, առողջական վիճակը (կա՞ն հաշմանդամներ, թե ոչ, այլ տվյալներ)»:

Ընտանիքի կազմին, զբաղվածությանը և առողջական վիճակին վերաբերող հարցին մեկ ուսանող նշել է, որ հայրը հաշմանդամ է: Ուսանողների 18%-ը /7 ուսանող/ նշել են, որ իրենց հայրերը չեն աշխատում, գործազրուկ են, 61%-ը /24 ուսանող/ նշել են, որ իրենց հայրերը աշխատում են պետական և ոչ պետական կառույցներում՝ Գեղարքունիքի մարզպետարանում, համայնքապետարանում, դատարանում, ինչպես նաև աշխատում են որպես վարորդ, տնտեսվար, մանկավարժ, փրկարար, ավտոմեխանիկ, զբաղվում են շինարարությամբ, գյուղատնտեսությամբ,

անասնաբուծությամբ և մեկնում են արտագնա աշխատանքների: Հարցվող ուսանողների 21%-ը /8 ուսանող / չեն պատասխանել հարցին:

1-ին կուրսի ուսանողների 51%-ը նշել են, որ իրենց մայրերը տնային տնտեսուհիներ են, հարցին չեն պատասխանել ուսանողների 15%-ը և 33%-և նշել են, որ իրենց մայրերը աշխատում են օպերատոր, բուժքույր, ուսուցիչ, վաճառողուհի, հաշվապահ, թարգմանիչ, քննիչ:

Հարցվողների մեծ մասը ունեն քույր և եղբայր, ովքեր սովորում են դպրոցում, համալսարանում կամ աշխատում են:

3. «Հաշվառված եք «Միասնական սոցիալական ծառայության» կենտրոններում («Փարոս» համակարգում)»:



Հարցվողների 46,6%-ը (17 ուսանող) նշել է, որ օգտվում է ընտանիքների անապահովության գնահատման «Փարոս» համակարգից: 56,4 %-ը նշել է որ չի օգտվում ընտանիքների անապահովության գնահատման «Փարոս» համակարգից:

4. «Ունե՞ք Էլփոստի հասցե»:



Հարցվողների 94,4%-ը /34 ուսանող/ տվել է «այո» պատասխանը, «ոչ» պատասխան տվել են ուսասնողների 5,6 %-ը /2 ուսանող/

5.«Ուսանողական ինքնակառավարման ո՞ր կառույցներին կցանկանայիք անդամակցել»:



Այս հարցին ուսանողները կարող էին նշել մի քանի տարբերակներ, հարվցողները տվել են հետևյալ պատասխանները.

- ուսանողական խորհուրդ-23
- ստեղծագործողների ակումբը -12
- տնտեսագետների ակումբ-9
- ուսանողական գիատական ընկերություն-7

6. Ի՞նչ նախասիրություններ ունեք»:

Հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.

- դաշնամուր,
- սպորտ,
- երգ, պար,
- ասմունք,
- նկարչություն,
- ընթերցանություն,
- երաժշտություն:

7. «Ի՞նչ արտադպրոցական հաստատություններ եք հաճախել»:

Հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.

- Գավառի երաժշտական դպրոց,
- «Արմաթ» լաբորատորիա
- Գավառի Հենրիկ Թալալյանի անվան երաժշտական դպրոց,
- §Թումո¦

8. «Ի՞նչ խմբակներ կցանկանայիք հաճախել ԳՊՀ-ում»:



Այս հարցին ուսանողները կարող էին նշել մի քանի տարբերակներ. հարվցողները տվել են հետևյալ պատասխանները.

- Բնագետների ակումբ - 7 ուսանող
- Տուրիզմի ակումբ - 15 ուսանող
- Նկարչական ստուդիա - 10 ուսանող

- Սպորտային խմբակ - 10 ուսանող

9. § Լեզուների իմացության մակարդակը¦



Լեզուների իմացության մակարդակը ստուգող հարցի վերլուծության արդյունքում պարզվել է, որ ուսանողները տիրապետում են ռուսերեն և անգլերեն լեզուներին մեծամասամբ «լավ» և «բավարար» մակարդակներում, անգլերեն և ռուսերեն լեզուներին գերազանց է տիրապետում 2 ուսանող: Ֆրանսերեն լեզվին բավարար մակարդակում տիրապետում է 11 ուսանող, իսկ Գերմաներեն լեզվին 7 ուսանող:

11. «Ինչպիսի՞ ակնկալիքներ ունեք համալսարանից» հարցին ուսանողները տվել են հետևյալ պատասխանները.

1. Հասարակությանը և ընտանիքիս պիտանի մարդ դառնալ:
2. Ունենալ լավ աշխատանք
3. Ունենալ լավ գործ:
4. Դառնալ լավ մասնագետ, ունենալ աջակցություն պետության զարգացման հարցում:
5. Գտնել լավ աշխատանք և հասնել հաջողությունների:
6. Դառնալ պետությանը օգտակար:
7. Դառնալ լավ մասնագետ, տիրապետել անգլերեն լեզվին գերազանցությամբ:
8. Այցելել տարբեր երկրներ:
9. Գտնել համապատասխան աշխատանք, դառնալ լավ մասնագետ:
10. Դառնալ լավագույն մասնագետ իմ ընտրած ոլորտում:

11. Ունենալ աշխատանք, աշխատել ինձ հոգեհարազատ բնագավառում:
12. Դառնալ լավ մասնագետ, օգտակար լինել Հայրենիքին:
13. Աշխատել դպրոցում որպես ուսուցիչ:
14. Ավարտելուց հետո դառնալ մրցունակ մասնագետ:
15. Ապագայում դառնալ լավ մասնագետ:
16. Ունենալ մասնագիտական մեծ հաջողություններ:

12. Խնդրում ենք նշել Ձեր *ֆակուլտետը*

Հարցման մասնակիցների 64,1 %-ը Հումանիտար մասնագիտությունների իսկ 35,9 %-ը Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողներ են:

13, Խնդրում ենք նշել Ձեր *բաժինը*



Հարցմանը մասնակցել են 2024 թվականում առաջին կուրսն ընդունված բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի առաջին կուրսեցիները:

Եզրակացություններ, առաջարկություններ

ԳՊՀ-ում ընդունված առաջին կուրսեցիների 43,6%-ը /17 ուսանող/ հաշվառված են «Փարոս» համակարգում, հիմնական մասի ծնողները չեն աշխատում, ունեն հաշմանդամության կարգ, սոցիալական աջակցության կարիք:

Հարցվողների մեծամասնությունը նշել են, որ մասնագիտության ընտրության հարցում կարևորում են իրենց նախասիրությունները: Հարցվողները, ինչպես 2023 թվականին, այնպես էլ 2024 նշել են, որ ուսանողական ինքնակառավարման կառույցներից նախընտրում են ուսանողական խորհուրդը, իսկ նախասիրությունների շարքում առաջնային տեղում են դաշնամուրը, ասմունքը, նկարչությունը, ընթերցանությունը, սպորտը, երգը, պարը :

Բացահայտելով առաջին կուրսեցիների կարիքները և նախասիրությունները՝ Գավառի պետական համալսարանի համար մեծ հնարավորություն է ստեղծվում ուսանողների առօրյան հագեցած կազմակերպելու, ֆինանսական օգնություն տրամադրելու, ինչպես նաև բուհում նրանց նախասիրությունների խթանման համար:

Գավառի պետական համալսարանում ԳՊՀ առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են ԳՊՀ բոլոր ստորաբաժանումներին, որպեսզի ուսումնասիրվեն, ներկայացվեն համապատասխան լուծումներ ու առաջարկություններ, արդյունքում ձեռնարկվեն միջոցներ՝ ԳՊՀ հիմնական շահառուների՝ ուսանողների, բավարարվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ: